ա) ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

բ) դատական կարգով անվճարունակ ճանաչված չէ, լուծարման գործընթացում չի գտնվում, արգելանքի տակ չունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.

գ) մասնակցության դիմումը ներկայացնելու օրվան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով.

դ) «......................................» -ն կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝

1) դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

2) գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,

3) իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

-------------------------------------------------- --------------------

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը) (ստորագրությունը)

Կ. Տ.

,, ,, *փետրվարի 2010թ.*

««Արփա-Սևան» թունելի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի անկախ միջազգային փորձաքննության և առաջարկությունների ներկայացման»

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՏԿՆՋՏՊԿ-ԾՉԲ - 01

ք. Երևան «23» փետրվարի 2010թ.

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս կոմիտեի նախագահի Ա. Անդրեասյանի, որը գործում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Հայնանոտեքնոլոջի» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Կատարող, ի դեմս տնօրեն Ա. Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում «Արփա-Սևան» թունելի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի անկախ միջազգային փորձաքննության և առաջարկությունների ներկայացման» ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների և սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով

նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5. Եթե շինարարական, այդ թվում վերանորոգման, ամրացման, ներքին հարդարման, վերականգնման, նորոգման և հիմնանորոգման, աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ են գալիս նախագծային շեղումներ, ապա նախագծած և փորձաքննություն իրականացրած անձինք պատվիրատուին վճարում են տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման և (կամ) դրա հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից երեք օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության ընդհանուր գինը կազմում է 54968600 (հիսունչորս միլիոն ինը հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Մատուցվելիք ծառայությունների ընդհանուր գնի 25 տոկոսը՝ 13742150 (տասներեք միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար հարյուր հիսուն) ՀՀ դրամը Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, որի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում:

4.4. Եթե սույն պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և կատարողը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացած վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրի N1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,05 %-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայությունն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ պատշաճ չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար

կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից: Սույն պայմանագիրը գործում է մինչև պայմանագրով սահմանված պարտավորությունների լրիվ կատարման ավարտը:

7.2 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.5. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.6 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սույն պայմանագրով նախատեսված գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները, բաղկացած 5 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պատվիրատու՝ | Կատարող՝ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | "Հայնանոտեքնոլոջի" ՍՊԸ |
| ք. Երևան, Վարդանանց 13 ,,ա,, | ք. Աբովյան, 4 մ/շ, 36շ, բն. 54 |
| ՖՆ աշ[illegible] գործառնական վարչություն | "Յունիբանկ" ՓԲԸ |
| հ/հ 900[illegible] | հ/հ [illegible]24100037745700 |
| հվհհ 0[illegible] | ՀՎՀՀ [illegible]3533993 |
| Կոմիտե[illegible] | Տնօրեն |
| [illegible]ՅԱՆ | Ա. ԴԱՎԹՅԱՆ |

Հավելված N 1
«23» փետրվարի 2010թ. կնքված

<u>ՀՀ ՏԿՆՋՏՊԿ-ԾՁԲ - 01 գնման պայմանագրի</u>

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Արփա-Սևան» թունելի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի անկախ միջազգային փորձաքննության և <u>առաջարկությունների ներկայացման ծառայությունների մատուցման</u>

Հայաստանի Հանրապետության կառավարության և Աբու Դաբիի Զարգացման հիմնադրամի միջև «Արփա-Սևան» թունելների վերականգնման ծրագրի 2007թ. դեկտեմբերի 12-ին ստորագրված վարկային համաձայնագրի ծրագրի ղեկավարման տեխնիկական աջակցության, նախագծման, փորձաքննության և տեխնիկական հսկողության նպատակով մատուցվելիք խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով ՀՀ 2009թ. պետական բյուջեով ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին հատկացված «Աբու-Դաբիի զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Արփա-Սևան» թունելի վերականգնման վարկային ծրագրի գումարների շրջանակներում 2009թ. հունիսի 8-ին կնքվել է ՆՄԲԾՁԲ-09/5 գնման պայմանագիրը:

Պայմանագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմվել և սահմանված կարգով անցել են փորձաքննություն:

Նկատի ունենալով «Արփա-Սևան» թունել օբյեկտի ռազմավարական նշանակությունը հանրապետության համար՝ անհրաժեշտ է մինչև շինարարական աշխատանքները կատարելու համար մրցութային ձևով կապալառու կազմակերպության ընտրելը, կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերը ևս մեկ անգամ ուսումնասիրել, իրականացնել փաստաթղթերի անկախ միջազգային փորձաքննություն և ներկայացնել առաջարկություններ (համաձայն կից առաջադրանքի):

Եթե կատարված ուսումնասիրությունների արդյունքում անհրաժեշտություն առաջանա նոր նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմելու, ապա կատարողը պետք է ներկայացնի փորձաքննություն անցած նոր նախագծերը, աշխատանքների ծավալներն ըստ տեսակների և նախահաշիվները: Բոլորը նյութերը ներկայացվում են 4 օրինակից, հայերեն և անգլերեն լեզուներով, համաձայն կից առաջադրանքի (կցվում է): Նշված աշխատանքների իրականացման նախահաշվային արժեքն իր մեջ ներառում է բոլոր տեսակի ծախսերը (հարկեր, տուրքեր, շահույթ և այլն): Նոր կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերը և բոլոր նյութերը պետք է ներկայացվեն պատվիրատուին թղթային և էլեկտրոնային կրիչով:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է ՀՀ 2010թ. պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին:

Ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվում ՀՀ կառավարության 2010թ. հունվարի N 100-Ն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 25 աշխատանքային օրվա ընթացքում:

Կատարողը պետք է ունենա լիցենզիա կապիտալ շինարարության բնագավառում քաղաքաշինության փաստաթղթերի մշակում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝ «Հիդրոտեխնիկական»:

**Պատվիրատու՝**

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե
ք. Երևան, Վարդանանց 13
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011567094
հվհհ 0255816
Կոմիտեի նախագահ
_______ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

**Կատարող՝**

"Հայնանոտեքնոլոջի" ՍՊԸ
ք. Աբովյան, 4 մ/2, 36շ, բն. 54
"Յունիբանկ" ՓԲԸ
հ/հ 24100037745700
ՀՎՀՀ 03535...
Տնօրեն
_______ Ա. ԴԱՎԹՅԱՆ

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

**Ծառայություններ են համարվում**

Արփա-Սևան երկրորդ թունելային հատվածի կառուցապատման, վերականգնողական աշխատանքների համար կազմված նախագծահաշվարկային փաստաթղթերի (Պատվիրատուի կողմից տրամադրված) ճշգրտումը, ուղղումը կախված լեռնային ճնշման ազդեցությունից և գնահատումից.

Հետազոտվող օբյեկտի նախագծի տեխնիկական ուսումնասիրությունները և հետազոտումը ПК 187+34-ից մինչև ПК 267+90, ПК 267+90-ից մինչև ПК 288+05 ,ПК 288+05- ից մինչև ПК 308+35 ,ПК 308+35- ից մինչև ПК 336+05, ПК 336+05- ից մինչև ПК 370+05 ,ПК 370+05- ից մինչև ПК409+85, ПК409+85- ից մինչև ПК483+83 հատվածներում՝ կազմելով նոր նախահաշիվ:

Վերոնշյալ ծառայությունները իրականացնելու համար կատարել ընտրված կառուցապատման բետոնի և եզրագծային մասսայի դիագնոստիկա՝ տրամադրելով տեխնիկական հաշվետվություն՝ կառուցապատման և եզրագծային մասսայի ընթացիկ վիճակի ու կառույցի շահագործման վստահելության մասին:

Կատարողը պետք է՝

ա) նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան.

բ) Պատվիրատուին ներկայացնի կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները.

գ) ներկայացնի աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջներ.

դ) պատվիրատուին նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացնի թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

Կազմակերպությունը պետք է ունենա առնվազն մեկ միջազգային խորհրդատու:

| Պատվիրատու՝ | Կատարող՝ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | "Հայնանոտեքնոլոջի" ՍՊԸ |
| ք. Երևան, Վարդանանց 13 ,,ա,, | ք. Աբովյան, 4 մ/շ, 36շ, բն. 54 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | "Յունիբանկ" ՓԲԸ |
| h/h 90001[illegible]394 | [illegible] 2470009937745700 |
| հվհհ 02[illegible]816 | ՀՎՀՀ 03533993 |
| Կոմիտեի [illegible] | Տնօրեն |
| [illegible]ԴՐՅԱՆ | Ա. ԴԱՎԹՅԱՆ |

Հավելված N 2
«23» փետրվարի 2010թ. կնքված

ՀՀ ՏԿՆՋՏՊԿ-ԾՋԲ - 01 գնման պայմանագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/հազ. դրամ/

| NN | Ծառայության անվանումը | Ծառայության մատուցումը՝ ՀՀ կառավարության 2010թ. հունվարի N 100-Ն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 25 աշխատանքային օրվա ընթացքում | Ընդամենը տարեկան |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | «Արփա-Սևան» թունելի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի անկախ միջազգային փորձաքննության և առաջարկությունների ներկայացման» ծառայություններ | 54968.6 | 54968.6 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | 54968.6 | 54968.6 |

Պատվիրատու՝

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե

ք. Երևան, Վարդանանց 13 ,,ա,,

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

հ/հ 900011567394

հվհհ 02555816

Կոմիտեի նախագահ

[illegible]

Կատարող՝

"Հայնանոտեքնոլոջի" ՍՊԸ

ք. Աբովյան, 4 մ/շ, 36շ, բն. 54

"Յունիբանկ" ՓԲԸ

Հ/Հ 24100637745700

ՀՎՀՀ 03523993

Տնօրեն

Ա. ԴԱԿԹՅԱՆ

Հավելված N 3
«23» փետրվարի 2010թ. կնքված

<u>ՀՀ ՏԿՆՋՏԴԿ-ԾՁԲ - 01 գնման պայմանագրի</u>

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հասցե______________________ | հասցե______________________ |
| հհ______________________ | հհ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հվհհ______________________ | հվհհ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «__________» 2010թ.

Պայմանագրի անվանումը՝ «______________________________________________» գնման պայմանագիր:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» «_____________» 2010թ.

Պայմանագրի համարը՝ ___________

Պատվիրատուն, ի դեմս______________________________________________ և Կատարողն՝ ի դեմս______________________________________________, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_________» 2010թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N__ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը «__» «_________» 2010թ–ից «__» «_________» 2010թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Ծառայությունները

| Ծառայության համառոտ նկարագիրը | Ծառայության քանակական ցուցանիշները | Ծառայության ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանա-կացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | ------------- | ---------- | | ---------- |

Վերոհիշյալ Ծառայությունների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը մատուցեց | Ծառայությունը ընդունեց |
|---|---|
| ______________________ (ստորագրություն) | ______________________ (ստորագրություն) |
| ազգանուն__________________ | ազգանուն__________________ |
| Կ Տ | Կ Տ |

# Ինքնարժեքի հաշվարկ

«Արփա-Սևան» թունելի վերականգնման շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ՝ կազմված և սահմանված կարգով փորձաքննությունն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի անկախ միջազգային փորձաքննության և *առաջարկությունների ներկայացման ծառայության մատուցում*

| Հ/Հ | Ծախսերի անվանումը | Չափման միավորը | Քանակ | Միավորի արժեք հազ.դր. | Ընդամենը հազ.դր. |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տեղական մասնագետների աշխատավարձ | դրամ | 10 | 700.0 | 7000.0 |
| 2 | Տրանսպորտային ծախսեր | դրամ | 5 | 1200.0 | 6000.0 |
| 3 | Արտասահմանյան մասնագետների աշխատավարձ | դրամ | 2 | 7265.0 | 14530.0 |
| *4* | *Նյութերի ձեռքբերում* | *դրամ* | 1 | 4500.0 | 4500.0 |
| 5 | Նախագծի հաշվարկային նյութերի պատրաստում | կոմպլեկտ | 1 | 1450.0 | 1450.0 |
| 6 | Շինարարության շուկայական արժեքի հաշվարկ | կոմպլեկտ | 1 | 1250.0 | 1250.0 |
| 7 | *Փաստաթղթերի բազմացում* | *կոմպլեկտ* | 4 | 300.0 | 1200.0 |
| 8 | Շինարարության համար անհրաժեշտ ՇՆ և Կ-ներից հոդվածներ և լրացուցիչ նյութեր | կոմպլեկտ | 4 | 180.0 | 720.0 |
| 9 | Փաստաթղթերի էլեկտրոնային օրինակ CD-սկավառակով | հատ | 1 | 50.0 | 50.0 |
| 10 | *Սարքավորումների ձեռքբերում* | *դրամ* | 1 | *1780.0* | *1780.0* |
| 11 | Այլ ծախսեր | դրամ | 1 | 1950.0 | 1950.0 |
| | Ընդամենը | | | | **40430.0** |
| | Վերադիր ծախսեր 3 % | | | | **1212.9** |
| | Ընդամենը՝ | | | | **41642.9** |
| | Շահույթ 10 % | | | | **4164.3** |
| | Ընդամենը | | | | **45807.2** |
| | ԱԱՀ 20% | | | | **9161.44** |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐԸ | | | | **54968.6** |

Պատվիրատու՝

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե
ք. Երևան, Վարդանանց 13 ,,ա,,
ՖՆ աշխատակազմի ֆինանսական վարչություն
h/h 90001156[illegible]
hվhh 02555[illegible]
Կոմիտեի նախագահ
[illegible]ՅԱՆ

Կատարող՝

«Հայնանոտեքնոլոջի» ՍՊԸ
ք.Աբովյան, 4մ/2, 36 շենք 54 բն.
«Յունիբանկ» ՓԲԸ
h/h 24100037745700
hվhh 03533993
Տնօրեն
Ա.Դավթյան
Կ.Տ